

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Հերկայ 1897 տարեշրջանի Պոչկարիոյ համար տարեկան 10ֆր " " " 1/2 " 5 " Արտասահմանի համար " 12 " " " " 1/2 " 6 " " կանխիկ վճարելի	Համակ դրամ եռայլն խրկել հետեւեալ հասցեով ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԻՐԱՌՈՒՆԲՔ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ) Редакция на вѣстникъ „Иравункъ“ ВАРНА (България).	Rédaction du journal „Irayvounk“ VARNA (Bulgarie)	Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք եւ չեն դրկուիր եւ յարմար դատաւաններն միայն կը հրատարակուին ամբողջովին կամ մասամբ: Ծանոցմանց տողը 20 սանթիմ. երեքէն աւելի անգամներու համար 20 առ 100 զեղը կը լինի:
--	---	--	--

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՎԵՋԻՆ ԳՈՐԾԸ

Բ. Դրան գործին մէջ հայ յիշատակական յեղափոխութեան յառաջնորդ արդարեւ ապշեցուցիչ է այն աստիճան որ անոր առաջ բերած ցնցողական շարժումը դեռ կը շարունակուի ելեքտրական հոսանքի սլոյցով մամուլի մէջ և միտքերու մէջ:

Ռուսները պայթեցաւ ու հայկական խնդիրը որ մաղմուղի տակ ծածկուած կայծ մըն էր՝ յանկարծ բռնկեցաւ:

Եղեղութիւնը արդէն ինքնին յուզիչ է և միանգամայն բազմաթիւ կնճռոտ հանգամանքներու պատճառաւ թելադրող զանազան կարծիքներու, որոց մէջ մաս մը կայ համաժողովի խնդրի վերաբերած մասն այս եղանակին, ու մաս մըն ալ հիմնովին հակակիր այս կերպ տակնուվրայութիւններու:

Կարծիքներու այս հակասակ հոսանքներուն հանդէպ մենք պարտականութիւն կը համարինք՝ յախուռն դատաստան մը ըրած չըլլալու համար՝ ամէն բանէ առաջ ուշադիր նկատողութեան առնել և մեր ընթերցողներուն ներկայացնել երկու կողմին գլխաւոր փաստերն ու առարկութիւնները, վասն զի անոնց ուսումնասիրութեամբ միայն կրնանք ինքնուրոյն և ուղիղ համոզում մը գոյացնել: Եւ այս գիտումով է որ մեր այս թիւին մէջ հրատարակած ենք կարծիքներու հակառակ հոսանքները ներկայացնող երկու գրութիւններ: Կ. Պօսոյ թղթականցութիւնը և մեր յարգելի աշխատակից Գամբը - Արշաւիրի «Հայկական հրաբուխ»:

Լսենք մէկ կողմի փաստաբանութիւնը:

Ռաբային ցոյցերը և մասնակի շարժումները, ինչպէս աղետալի փորձառութիւն մը ակնհայտ ցոյց տուաւ, մեր դատին մաղի չափ իրական ծառայութիւն մը չմատուցանելէ զատ՝ թուրքին պատրուակ կըլլան հայ տարրին

գոյութեան պայմաններուն մահացու հարուածներ տալու, զորս արդիւող ձեռք մը չպիտի գտնուի քանի որ կայ և կը տեւէ Եւրոպայի արդի քաղաքական կացութիւնը: Ի՞նչ կը նշանակէ ուրեմն Բ. Դրան կամ օսմ. պանքային մէջ ռուս արձակել: Բաւական չե՞ն արդէն այն անգարմանելի վնասները զոր ունեցանք: Եթէ ազգին դէմ դաւաճանութիւն մը չէ, գոնէ պարզապէս յիմարութիւն մըն է քանի մը չենքեր ուժանակով քանդելով թուրքին առիթ տալ կոտորածները և ընդհանուր սաստիկ հալածանքները վերակսելու և այս անգամ իրօք բնաջինջ ընելու հայ տարրը թուրքիոյ մէջ: Նոյնչափ անմասնութիւն է կարծել որ մենք մեր ցոյցերով և ռուսի գործածութեամբ կը ստիպենք Եւրոպան իր քաղաքականութիւնը փոխել, թուրքին թշնամի և մեզ պաշտպան ու բարեկամ դառնալ: Վեց մեծ տէրութեանց շահերը կը պահանջեն որ իրարու դէմ պատերազմ չհրատարակեն: ասոր համար է որ կուզեն թուրքիան կանգուն պահել առ այժմ: Իրենց այդ շահերը այնքան մեծ են որ ի հարկին յանձնառու պիտի ըլլան անոնց զոհել ոչ միայն հայ ազգը, այլ և այն միլիոնները զոր ունին օսմ. պանքային մէջ: Ռուսի կէտերն հայ ռաբարձակները կը սպասեն այն պաշտպանութիւնը որ մեզ պիտի փրկէ վայրագ թուրքին ահաբեկութիւններէն:

Ոչ, մեզ պէտք եղածը մասնակի շարժումները չեն: Ընդհանուր լուրջ պատրաստութիւններ տեսնել պատահ ժամանակ մը և յարմար կէտերու վրայ ընդհանուր յեղափոխութիւն կամ ճշգրտին բառով՝ ապստամբութիւն յարուցանելու հայաստանի մէջ, ահա միակ ուղիղ ճամբան, որ մեզ ազատութիւն կը խոստանայ և ուսկէ գուրս ամէն յեղափոխական ձեռնարկ բացարձակապէս դատապարտելի է իր ծուռ և վնասակար:

Հակառակ կողմին պատասխանն է:

Կընդունինք որ եւրոպական քա-

ղաքականութիւնը չափազանց աննպաստ է մեզ համար և թէ մեր շարժումները անկարող են այդ քաղաքականութեան նոր, տարբեր ուղղութիւն մը տալ:

Սակայն եթէ շարժումները այս պատճառով չեն կրնար մեր ազատութեան յանգիլ, կրնան զարկ մը տալ բարենորոգմանց խնդրոյն, որ հակառակ չէ Եւրոպայի բաղձանքին և ոչ իր քաղաքականութեան և որ բոլորովին մոռացութեան մատնուած էր: Թուրքը կառավարութիւնը յայտարարեց և աշխարհ միտեցաւ հաւատարմութիւն հայերը ալ այնքան ճշուած ու ահաբեկեղած էին որ իրենց ամենէն տաք գլուխներն իսկ չպիտի յանդգնէին մտաբերել նոր շարժման մը գաղափարը:

Թողու որ այս կարծիքը հաստատուի և բարենորոգումները մոռացութեան մէջ թաղուած մնան, ոչ միայն բարոյական յետին ծայր ստորնութիւն մը պիտի ըլլար մեզ համար, նախատինք մը հայկական դատին հարկը հաղորդուող նահատակներուն յիշատակին, այլ և ստրկական համակերպութիւն թուրքահայութեան իբր ուրոյն տարր ջնջման, որ ապահովապէս մօտ տարիներու մէջ պիտի կատարուէր իբր անխուսափելի հետեւանք հայաստանի մէջ տիրող արդի կացութեան: Հայաստան յամր, սակայն ստոյգ հոգեվարքի մէջ է: անօթութիւնը որ տեղ տեղ ժողովուրդը կը ստիպէ խոտով կերակրուելու, մարտականութիւնը որ բարոյական մարդը կը սպանէ, մերկութիւնը և ասոնց բնական հետեւանք զանազան հիւանդութիւնները, իսլամացումը և գաղութականութիւնը ամէն օր, ամէն ժամ փճացնելու են վրայ են Հայութիւնը: Այս իրական, ահագին վտանգը վայրկեան մը մոռնալու չենք: և երբ հաշուի առնենք նաեւ այն սոսկալի սովը, որ յառաջիկայ ձմեռ անթիւ հայ կեանքերը զրաւել կը սպառնայ նոյն իսկ ըստ վկայութեան եւրոպացի միսիօնարներու, յայնժամ կրնանք ըմբռնել թէ հայուն գոյութիւնը քանի մը տարիներու խնդիր է միայն արդի

հանգամանքներուն մէջ:

Այս վիճակին մէջ կարելի՞ էր մեզ կենդանութեան նշոյլ մը ցոյց տալ: Ընական չէ՞ր որ մահուան վերահաս վտանգին դէմ ինքզինքնիս պաշտպանելու համար շարժում մը ընէինք: Նոր կոտորածներու երկիւղը, այդ պատահական լուրերը, այդ եկրադրութիւնը միայն կրնա՞ր, բաւական էր մեզ ստիպելու որ անբան կենդանի մը աւելի անզգայ ու անշարժ դիտէինք մօտեցող վերջին գերագոյն ճգնաժամը, ստոյգ ոչնչացում մը: Ընդհանուր յեղափոխութիւն, ապստամբութիւն գեղեցիկ երազներու նշանակութիւնը միայն ունին անոնց համար, որոնք թրքահայաստանի վիճակին տեղեակ գիտեն թէ հնար չիկայ այլեւս այդպիսի մեծ, ծանր գործ մը գլուխ հանելու այս մօտ տարիներու մէջ:

Եթէ բարենորոգումները, որոնցմով միայն կարելի պիտի ըլլայ գոնէ մեր ազգային գոյութիւնը պահպանել, պահանջելով և այս պահանջման համար ցոյցեր ընելով իրօք պիտի վնասուինք, լաւագոյն է զոհուիլ պաշտպանելով մեր մարդկային ամենասուրբ իրաւունքները, բան անշուշտ, յամրաբար ոչնչանալ թշնամիին անձնատուր լինելով վատօրէն:

Այս երկու հակառակ տեսութիւններէն վերջինը մեզ կը թուի հիմնական և վեհանք:

ՀԱՅԱԿԱՆ ՀՐԱՐՈՒԻԸ

Աւելորդ է հոս թուել այն իրադարձութիւնները որոնցմէ անցաւ Հայկական հարցը՝ հրատապ և սպառնալից հանգամանք մը ստանալէն, այն է Սասունի ջարդէն իվեր, որուն յաջորդեցին արիւնալից մեծադժոգ ցոյցեր և մասնական շարժումներ:

Այնչափ դարերէ ի վեր ստորկութեան վարժուած ժողովուրդի մը կենդանութեան այս բացարձակ նշանները, որքան ապշու-

Թեամբ և կատարութեամբ ընդունուեցան մեր թշնամիէն, նոյնքան ալ համակրութիւն և համարում վասակցուցին մեզ այն ազգաց կողմէն որ հազիւ թէ տեղեակ էին հայ ազգի մը գոյութեանը Ասորի խորքերուն մէջ:

Բայց եթէ ժողովուրդները մեզ հետ էին, կառավարութիւնները առ հասարակ հակառակ եղան մեր փրկութեան՝ բռնութեանց ամենէն ճիւղալային ձեռքէն: Իրենք արդէն շատոնց մէկ կողմ թողած մարդասիրական քաղաքականութիւնը, շահու նկատումներէ կուրացած, զգացումներու ամէն վսեմութենէ մերկացած, փոխանակ օգնութեան ձեռք կարկառու մեզ՝ որ համակրօն եղբայրներ էինք և համասիրտ ու համամիտ քաղաքակրթութեան ռահվիրաներն հանգիստանալու հայաստանի արեւնոտ ու աւերակ դաշտերուն մէջ, իրենք՝ մեզ ճնշեցին շատ անգամ, մեղսակից և խորհրդատու եղան մեր դահիճներուն, խուլ մնացին հանրային կարծիքին որ գործուած անլուր ճիւղալայիններուն առջեւ կը սարսուար, ու այս ամենքը ջանացին ծածկել փաղաքշիչ խօսքերու, անհիմն ու կեղծ խոստումներու խաւին մէջ:

Եւ յաջողեցան ալ շատ անգամներ. այս նենգաժէտ խօսքերով է որ բանիցս մոխիրով ծածկեցին հայ ժողովրդեան լայնածաւալ հրդեհը:

Եւրոպան և թուրքը կը յուսային հալածանքով, սպանութեամբ, բանտով, կախաղանով և դժոխքի ամէն հնարքներով խեղդել պատմական ազգ մը և անոր քաջ և անձնուրաց զինուորներուն բանակը, ոչնչացնել անոնց իղձերը և այն ճիշերը զոր իրաւանց և մարդուս յատուկ ըզգացումները կը լալէին անոնց սիրտերէն: Եւ անգամ մը որ ազգը առանց բանակի մնար, դիւրին էր զայն ճմլել, և իր երակներուն մէջ մնացած արեան

յետին կաթիլներն ալ քամել, զայն բոլորովին անպէտ զանգուածի մը վերածելու համար: Եւրոպա և թուրքը ամիսներէ ի վեր զիրար կը շնորհակարէին. ազատած էին հայ յեղափոխականէն որ իրենց քունը և հանգիստը վրդովելու յանցանքը գործած էր: Այլ սոսկացին հայիրը, կըսէին, ջարդերը անոնցմէ ամենէն կատաղիին իսկ աչքը վախցուց, կը պատասխանէին ուրիշներ. և իրարու ձեռք կը սեղմէին սատանի ժպիտով, կարծելով թէ յեղափոխական տարրը գաղթած էր գործելէ, թէ գոյութիւն չունէր ան:

Ինչ հերքում, տէր տատուած ինչ գործնական և շնորհալից հերքում այս սնտի ենթագործութիւնը ընդհանրուն:

Միթէ այդքան անսահման զոհողութիւններէ, դէպ զէպ դիակներէ, թափուած ծովածաւալ հայկական արեւնէն՝ որուն սահմանքային հաստը դեռ կը լսնէ ու կը տեսնենք իր սպառնալից փրկփութներով: Ինչ, այդքան առեւտրաբէ, այդչափ անողորմ կը ռիւններէ, և հերոսութիւններէ ետքը, թողու որ մեր ամբողջ գործը թաղուի, ընկրկի և հըրաժարի մեր ամենէն քաղցր յայտերէն

Ինչպէս կրնային մեր թշնամիները յուսալ այդ բանը:

Անցեալ չորեքշաբթի օրուան Պոլսոյ դէպքը, կըսենք, փայլուն ապացոյցն եղաւ թէ պահանջող հայը միշտ հոն իր տեղը կեցած է, սիրտը թունդ, աչքը հրաշայտ, հայրենեաց սիրովը հրաւառ, իբրեւ անձնուրաց զինուոր մէկ ձեռքը բռնած իր մարդու անբռնարարելի և սուրբ իրաւանց ծրարը, որուն առջեւ պատկառանքով պէտք է ծռին ազգը և ազինք, և միւս ձեռքը այն կլորիկ մարմինը, որ տառապեալ հայ սրտերէ բխած որոտը և հայկական հրաբուխին արձակած լաւան է, — ու ժանակը:

Հայ յեղափոխականներուն Պոլսոյ մէջ հասուցած նիւթական վնասովը չէ որ պիտի զբաղինք. չէ նիւթական չէքին ամբողջական կամ մասնակի քանդումը և կամ տեսնեալ մը աւելի կամ պակաս անձերու մահը չէ որ ունի ամենէն մեծ նշանակութիւնը: Բարձր, Գուռը, մեծագոյն պաշտօնէութեանց այս հաւաքածոն, այն հաստատութիւնն է որ թուրք կայսրութեան հոգին կը կազմէ: Իսլամը ջերմեռանդութեամբ և ոտքին ծայրերուն վրայ կոխելով է որ երկրաւորօրէն կանցնի այդ լարերինդոսին առջեւէն, ուրիշ արձակուած են ամենէն հակամարդկային վճիռներուն մէկ մասը: Այնոր մասնական քանդումովը՝ ամենէն մեծ արհամարհանքը ժայթքեց հայը թուրքին անամօթ եւ լիսին:

Պանքի փորձը նաեւ արհամարհանք մըն էր եւրոպեան խաբէրաներու. ակնթարթի յապաղում մըն է միայն որ հարիւրաւոր պաշտօնեաներ և ամբառ հարստութիւն մը փրկեց հիմնական ստույգ փճացմանէ: Չենք ցաւիւր անշուշտ որ աղատուած ըլլան անոնք. արդիւնքը գրեթէ նոյնն է, միայն, երանի թէ այս պիտեալսու դասը բաւէր համոզելու Եւրոպան թէ տակաւին ինչեք կրնայ խորհիլ ազգ մը երբ տեսնէ թէ պէս պէս դաւաճանութիւններու զոհ ընել կուզեն զինքը, և մեզի ցաւալի ծայրայեղութիւններու չի մզէր:

Յուսադրական է հայ յեղափոխութեան այս կենդանութեան նշանը, որ կենթադրենք թէ նախակարգապետն է աւելի կարեւոր շարժումներու՝ պատահաւորութիւններու և պատահ վայրերու մէջ:

Անշուշտ չեն պակսիր նաեւ այն պիտի անհատներ որոնք հակամէտ են միշտ իրենց կեանքը անցընել սնտի երեմիականներ կարգալով: Ասոնք եթէ չափազանց բարեհաճ չեն, կատարեալ եսամոլներ ըլլալու են որոնք թույլ սրտի տէր, աշխարհի մէջ ամեն վսեմ փառա-

սիրութենէ կամ վեհ ձգտումէ զուրկ, ուրիշ իղձ չունին, եթէ ոչ ճոխ սեղան մը և հանգիստ հոգեւարք մը վայելել և չեն գիտեր թէ սրբա՛ն անգին է ազատութիւնը և որքա՛ն զոհողութիւններ կը պահանջէ ան երբեմն:

Արդարութիւն է ըսել նաեւ թէ այս նկարագիրները մասամբ ալ առաջ եկած են զխաւարաբար կարգ մը անձերէ, ճշմարիտ բաժաներ, որոնք ժողովուրդին մէկ մասին վատաւարութեան մէկ վաղանցուկ րոպէն շահագործել ուղած են ինքզինքնուն գիրք մը կազմելու համար:

Ժողովրդին կը թողունք արժանաւոր ընդունելութիւնն ընել տանց. և մեր մասին, ճշմարիտ հայու զգացումներով տողորուած, կը յորդորենք ազգը որ այն աչքով վերաբերուի Յեղափոխութեան որով սարուկը կը դիտէ իր երկաթներէն զինքը ազատելու սլացող ազատարար ոգին:

Ասով անշուշտ չենք ուզիր ըսել թէ կոյր հետեւող պէտք է ըլլալ բայց ոչ ալ կոյր անտարբեր ըլլալու է: Հայ Յեղափոխութիւնը անձի կամ խմբակի սեփականութիւն չէ, և պէտք չէ որ ըլլայ. ամենուն է ան, ամենքը անով պիտի տառապին, մեռնին կամ փրկուին: Ամեն հայ անհատ ենթակայ է անոր ազդեցութեան:

Ազգասիրութեան պարտքը կը հրամայէ որ փոխանակ անմիտ քննադատներ դառնալու, տխար լալկաներ, անջիլ յոռետեսներ, ամենքս ալ միւր ընդունակութեան և կարողութիւններուն որոշ չափովը մասնակից ըլլանք անոր, բարեփոխումներ ներմուծենք հոն՝ զայն աւելի բարձր, աւելի տոկուն կռուանի մը յանգեցնելու համար: Ամենքս ալ մեր խելքը, մեր ուժը, մեր ոսկին և եթէ հարկը պահանջէ մեր կեանքը մատուցանենք ազատութեան դիցուհիին, որքա՛ն ալ խոտապահանջ ըլլայ ան:

Փառեալ-Արշալիր

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ԶՈՅՆԵՐ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՔՍՈՐԵԱԼԻ ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆՅՅ)

Գ.

Կէս օրը մի քիչ անցել էր. ձիւնախառն անձրեւ էր գալիս. երկնքին նայելիս մարդու սիրտ էր խառնվում, թէեւ մեր փոքրիկ խումբը արդէն մօտեցել էր նահանգական Վ. . . քաղաքին, սակայն օդի խաւարմած լինելու պատճառով դեռ ոչինչ չէր երեւում: Վերջապէս բարձրացած ու խոնաւ օդի մէջ երեւացին ռուսական եկեղեցիների կանաչ գմբէթները. սիրտս սկսեց տրտփալ ու թրթալ. մօտենում էր ազատութեան վայրկեանը, վերջապէս ազատվելու էի բանտից. չէի լսելու

չղթաների զրնգոցը. դռների շառաչումը եւ բանալիների շփոյնը . . .

Քաղաք մտանք, մինչեւ ծնկներս ցելս էր, մենք իրաւունք չունէինք մայթերի վրայով գնալ, պէտք էր ուղիղ ճամբի միջով քայլէինք: Ինչ կալող էինք անել, զինուորները ընդունել էին իրանց պաշտօնական չոր կերպարանքը եւ երբ մենք մի փոքր շեղվում էինք ճամբից, հրացանի կոթով մեզ կարգի էին բերում:

Մեզ տարան ոստիկանապետի մօտ, մի ժամ մենք կանգնեցինք նրա դրան առաջը. մեր վիճակը անտանելի էր, մենք թրջվում ու սառչում էինք, սակայն պարոն ոստիկանապետը դեռ ուշանում էր: Վերջապէս եկաւ. եւ մեզինք մի քանիսի համար՝ զինուորներին պատուիրեց կրկին բանտ տանել. հիասթափումս միծ եղաւ, կրկին բանտ բացականչեցի եւ եւ երբ յայտնեցի որ ինձ հիմա բանտում պահելը ապօրինութիւն է, ոստիկանապետը արհա-

մարական հայեացքով նայեց ինձ եւ ասեց.

—Շատ էք խօսում, պարոն, դնացէք եւ գլուխս մի ցաւեցնէք:

Կատարութիւնս չափազանց էր, սկսեցի զոգալ, ատամներս իրար էին զարկվում, կրկին բանտ, բայց ինչ կարող էի անել, իմ դէմ էր Ռուսական բռնութիւնը իր բոլոր զէնքերով, այդ բռնութիւնը ինձ դարձրել էր մի աֆոսմաւտ մեքենա, ու իր ուղածի պէս խաղացնում էր . . .

Եւս ժամից յետոյ կրկին բանտային փակուած սենեակում էի, վանդակում բռնված առիւծի նման սենեակի մի ծայրից միւսն էի թռչում եւ մաքումս անիծում աշխարհը իր խեղդող օրէնքներով, մարդկութիւնը իր վատ բռնականներով . . .

Բոլոր ջղերս ու նեարդերս լարվել էին, շուրթներս շարունակ ցընցվում էին, սենեակից ընկերներիցս ոմանք ժպտում էին, ոմանք գլուխ-

ները օրօրում, ոմանք էլ ցաւակցաբար դիտում էին ինձ:

Աւելի անբեւեւ ու հետաքրքիրներից մի երկուսը մօտեցան եւ տուին սովորական հարցերը. ո՞վ ես, ինչո՞ւ ես ձերբակալված. սակայն իմ խոժոռ հայեացքը եւ արհամարհական լուծիւնը լեցրեց նրանց:

Մի քանի անգամ մօտեցայ դրանք, բաղիւնցի, ոչ ոք չեկաւ:

Վերջապէս համբերութիւնս հասաւ, կրկին մօտեցայ դրանք եւ ոտքի ուժեղ ու յաճախ հաւաքներով բաղիւնցի:

Մի քանի վայրկեանից եկաւ մի դաժան պահապան, բարկացած բացեց դուռը եւ գոռաց—Ո՞վ է յանդգնում այդպէս լրբաբար դուռը ձեռնել:

—Լիրբը դուք էք, պարոն, գոչեցի ես: Պահապանը մի վայրկեան ապշեց. ապա ձեռք բարձրացնելով ինձ վրա եկաւ:

—Հեռու, վատ արարած, գոչեցի,

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

—X—

Կ. Պօլիս, 8 օգոստոս

Դարձեալ տինամիթի և ռուսի:
Բ. Դրան մէջ չորեքշաբթի օրը
ռուս մը պայթեցաւ, քանի մը
սենեակներ քանդեց կամ ավերեց.
3-4 մարդ վիրաւորուեցան, որոնց
մին մեռաւ:

Նոյն օրը Բերայի կառավարչին
պաշտօնատան տոջն ուսմբ մը
նետուեր է, բայց չէ պայթեր:
Նոյնպէս Օսմ. Պանքային մէջ
ռուս մը պայթեցնելու պատ-
րաստուած հայ երիտասարդ մը
ձերբակալուեցաւ: Ըստ ոստիկա-
նութեան պաշտօնական յայտարար-
ութեան՝ Դրան և Բերայի մէջ
ռուսներ նետով երկու հայերը նը-
մանապէս ձերբակալուած են:

Բերայի և Պօլսոյ խանութները
գրեթէ ամբողջովին փակուեցան
և ամէն ոք փութաց պահուելու:
չընդհատուած ըլլալով զադ-
րեցաւ առաջին օրը. երկրորդ օ-
րը վաճառատուններուն և կրպակ-
ներուն մէկ մասը բացուեցաւ,
այսօր երրորդ օրը, գրեթէ փո-
ղոցները և խանութները իրենց
սովորական երեւոյթը ստացած
են, միայն սիրտերու և մանա-
ւանդ հայ սիրտերու մէջ վախը
տակաւին փարատած չէ: ամենքս
ալ անտանելի կաշկանդման մէջ
ենք: ամենամեծ զգուշութեամբ
խօսելու, շարժելու, և վարուելու
դատապարտուած ենք թուրքերու
հանդէպ: յոռիքներ ոսկի է հին
առածը աւելի քան երբեք ճշմար-
տութիւն մը դարձած է հիմայ
մեզ համար: շատ հայեր կը նա-
խընարեն առ այժմ տան մէջ փա-
կուած մնալ:

Իրաց այս վիճակին մէջ անկա-
րելի եղաւ ինձ առ այժմ ռուսի-
քու գէպքի մասին աւելի ման-
րաման տեղեկութիւններ քաղել:
Հայ ըլլալը արտակարգ դժուա-
րութիւններ ունի ինչպէս շատ
գործերու, նոյնպէս և մանաւանդ
թղթակցի պաշտօնին համար:

արիւնս գլուխս թռաւ, ամեն բանի
պատրաստ էի: Բանտապահը տանց
սենեակում լսեց մի բարձրաձայն
քրքիջ, չղթալակապ ոճրագործներից
մէկը ընկաւ իմ եւ պահապանի մէջ-
տեղը:—հա ի՞նչ է, սա էր քեզ կան-
չում, մի քանի անգամ կանչեց, չե-
կաք, նրա համբերութիւնն էլ կարը-
վեց:

Պահապանը իր առջևը տեսնելով
հուժկու ոճրագործին՝ կակղեց եւ քա-
ղաքավարութեամբ հարցրեց ինձ:—
Ի՞նչ էք ուզում:

—Բանտապահին, պատասխանեցի
ես:

—Նա այստեղ չէ, գայ թէ չէ իւ-
կոյն կիմացնեմ: այս ասեց ու գնաց:
Նա կրկին սկսեցի չընդհատել սեն-
եակումս, մտածել: բայց ի՞նչ, ամեն
բան մութ էր. ես երեւակայում էի որ
ինձ խաբել են, միշտ պէտք է բան-
տում պահեն, վիճակիս անորոշու-
թիւնը ինձ տանջում էր, սիրտս ճըմ-

Բերայի մէջ վստայող եւրոպացի
թղթակիցները ընդհանուակը
շատ գիւրուածիւններ և միջոցներ
ունին ամէն տեղեկութիւն ստա-
նալու և իրենց թերթերուն հա-
ղորդելու անմիջապէս:

Բնական է որեւէ ուրեմն որ աւելի
շուտ անոնց մէջ կարգունք դէպ-
քին վերաբերեալ մանրամասնու-
թիւններ զորս հայ մը չկրնար իւ-
կոյն իմանալու հետամուտ ըլլալ
առանց ինքզինք ծանր վտանգնե-
րու ենթարկելու:

Ինչ որ կրցի իմանալ հայ ըն-
տանիքներու շրջանակին մէջ մի-
այն մտնելով, հայ ժողովրդին՝
նորագոյն յեղափոխական շահա-
տակութեան մասին դժբախտ ու
խորհածն է:

Արդէն գրեցի ձեռք նախարդ
նամակովս թէ ժողովուրդը զայ-
լոյթ վզացած էր մօքթօս Գա-
րադաշի գէպքին հեղինակներուն
դէմ, չկրնալով հասկնալ թէ այն-
քան դառն փորձերէ հտքը հայ
յեղափոխականները ինչ գիտու-
մով կուզեն շարունակել իրենց
գործելու սովորական եղանակը:
Այս զայլոյթը աւելի մեծ և ա-
ւելի ընդհանուր է վերջին ուրմ-
բարձակներու և այն ընկերու-
թեանց դէմ, որոց կը վերաբե-
րին իրենք:

Կարճ խօսքով ըսեմ ձեռք թէ
Պօլսոյ հայութիւնը ինչպէս կը
խորհի հիմայ:

Հայկական ջարդերը և ցունա-
կան պատերազմը իրենց ամէն հան-
գամանքներով անհերքելի կերպով
հաստատեցին թէ Եւրոպայի վճռած
է, ինչ որ ալ պատահի, որքան
ալ քրիստոնէական արիւն թա-
փուի, թուրքիոյ վրայ իրական
ճնշում չբանեցնել քրիստոնիայ
ազգերու ի նպաստ: Ուրեմն ի՞նչ
բանի վրեժն ծառայել ցոյցերը և
ռուսները, եթէ ոչ թուրքին ա-
ռիթ տալ ջարդերը, տանջանք-
ները և այն ամէն հալածանքները
վերսկսելու ամեն ստատկութեամբ:
Եթէ նոյն իսկ յեղափոխականնե-
րուն ռուսները քանդէին Բ. Դրու-

ւրում էր... Այդ միջոցին մօտեցաւ
ինձ պաշտպանող ոճրագործը: դա մի
չիկաներ, բարձրահասակ, խոշոր ու
մաշի աչքերով և փառահեղ մօրուքով
տարեց մարդ էր:

—Ներեցէք, պարոն, որ ձեզ ան-
հանգստացնում եմ, ասաց նա, ինչո՞ւ
էք այդչափ յուզւում, այդ վնասակար
է, մանաւանդ բանտում: պարզեցէք
ինձ ձեր մխրձը, գուցէ ձեզ օգտակար
լինիմ, մարդս շատ անգամ ամեն մի
սովորական բան շատ սեւ գոյներով է
տեսնում:

Նրա խօսելու ձևը ինձ գրաւեց եւ
ես պարզեցի իմ դրութիւնը:

—ձեռք, յուզվելու բան չըկայ:
Այս եւրոպական Ձիւնաստանում այն-
քան յիմարութիւններ կան, որ ամեն
մեծ յիմարութիւն սովորական բան է:
դուք, եթէ չեմ սխալւում, կովկա-
սեցի էք, ձեր տաք բնատրուածեամբ
չէ կարելի ապրել այստեղ: մեր մար-
դիկը մեր երկրի կլիմայի պէս պաղ

ուր և օդը հանէին օսմ. պանքան,
յայտնի բան մը չէ՞ որ Եւրոպա-
կան քաղաքականութեան արդի
վիճակին մէջ դարձեալ բան մը
ձեռք չպիտի կրնայինք ձգել և
իդուր Եւրոպայի և Դրան տուե-
լութիւնը գրգռած պիտի ըլլա-
յինք մեզ դէմ, նիւթական մեծ
վնասներ պատճառելով անոնց:

Ժողովրդային դատողութեան
այս պարզ և բնական եղանակին
դէմ յեղափոխականները ի՞նչ ու-
նին առարկելք որ զիրենք ար-
դարացնէ. եթէ ունին թո՛ղ ըսեն
բացէ բաց իրենց թերթերուն
մէջ: մենք ալ համոզուինք ու
գիտնանք թէ իրենց ուղղութիւնը
թուրքիոյ հայ տարրը բնաջինջ
ընել տալու ճամբայ մը չէ: Ինչ-
քով, պատուով և կեանքով տու-
ծայ, հողեւարք վիճակի մօտ հա-
սած ժողովուրդը իրաւունք ունի
յեղափոխականներէ այսպիսի բա-
ցատրութիւն մը պահանջելու, որ
եթէ իրեն զլացուի, կը վախճամ
որ հեռի չըլլայ այն օրը ուր յե-
ղափոխական և ժողովուրդ իրա-
րու դէմ մաքաւին իբր թշնամի-
ներ՝ ի մեծ ցնծութիւն մեր բուն
թշնամիին:

Այս վայրկեանս կիմանամ որ
ոստիկանութիւնը սկսած է ձեր-
բակալութեանց: Ո՞վ գիտէ ինչ
երիտասարդ կեանքեր պիտի
խամբին, ի՞նչ ընտանիքներ հիմ-
նադրապէս պիտի կործանին:

Ահա ռուսներու իրական հե-
տեւանքը:

Գոնէ կոտորածէ ազատ պիտի
մնանք այս անգամ:

ՍՕՆ ՎՈՒԳՈՒՍԱԹԱ ՏԱԻՐ
ԹԷԼԷԿՐԱՖԻԱՐ

—X—

Սթանպօլ, 7 Օգոստ.

Տիւն վէ պու կիւն բէք չօգ էր-
մէնիլէր տէրտէսթ օլընուլար:

Վուգու պուլան հատիսէյէ զի-
մէտիալ օլան էրմէնիլէր՝ վիլայէթ-
լէրտէ թիւրքլէրին եհնի գըրկըն-
լարա թէշէպպիւս թիմէլէրիտէն

են: Ինձ համար այժմ ամեն ինչ պարզ
է: Նահանգապետը չէ ուզում որ դուք
ապրէք իր աթոռանիստում, նա ձեզ
նմաններին չէ սիրում, դուք կարող
էք Ձարի բարեպաշտ եւ հաւատարիմ
հպատակների մօքքը պղտորել: ան-
շուշտ նա ձեզ կողարկի իր նահանգի
ամենաեղ ընկած անկիւնը: հանգիստ
եղէք, այս երեկոյ ամեն բան կը պար-
զվի: եթէ ուշանայ, վաղը նահանգա-
պետին խնդիր կը տաք:

Ոճրագործը ինձ հետաքրքրեց եւ ես
նրան հարցրի:

—Ձեր անունը եւ...

—Վլաաիմիր Գլուսկով, ընդմիջեց
նա, նախկին սպա, վերջը մարդաս-
պան, այն էլ երկուսին սպանող: այ-
ժմ Սիբիրի թափառաշրջիկ, մի քանի
անգամ խարաղանով ծեծված, հը,
ի՞նչ է, կարծեմ Ձարի սպայի համար
պատուարեր չէ:

—Բայց ինչպէս եղաւ, յուզվելով
հարցրի ես:

գօրգմագտա տըրլար:

Պունտան տօլայը ֆրանսըզ էլ-
չիսի՝ Սուլթանտան խուսուսի եօլ-
լանըմըլ օլան իզզէթ պէյէ՝ չէ-
տիտ թէնպիհլէրտէ պուլընտը վէ
գըրկըն վուգու պուլմամագ իչիւն
մուէսսիր թէտպիրլէր էլէ ալընմա-
սընըն իզթիպասընը իսթար էյլէ-
տի:

Պատրիարքարանտա վէ Էրմէնի
միւթէհայիզանընտա տէհչէթ հիւրմ
իթմէքտէ վէ եհնի գըրկըն վու-
գուլինտէն վէ քիլիտէն էրմէնիլէր
գօրգմագտա օլուպ, պու հատի-
սէյէ թէշէպպիւս իտէնլէրի իթ-
համ իթմէքտէ տիրլէր:

Պապը Ալի՝ պու վուգուսթ սէ-
պէպի իլէ վիլայէթլէրտէ էրմէնի-
լէրէ գարըն ֆէհալըզլարըն վէ
միւսատէմէլէրին էօնիւնիւ ալմագ
իչիւն միւլքիյէ վէ ասքէրիյէ գօ-
մանտանլարա շէտիտ էմիրլէր վէր-
տի: Ասայիշ իսլալ օլունուր իսէ
Սուլթան մէմուրլարը շախսէն մէ-
սուլ թուլթաճագ տըր: Մէմուլ
օլընտըղընա կէօրէ պու վուգու-
սթտան տօլայը վիլայէթլէրտէ
գարընգըզլար հուսուլա կէլմէ-
յէճէք տիր: Սթանպօլ սիւփիւ-
նէթլի պիր հալտէ պուլունըյօր:

Սթանպօլ, 8 օգոստ.

Պուլիւն էլչիլէր քէնտի խա-
րիճի բօսթալարը իլէ էրմէնի
իսթիլալ գօմիթէսինին Սթանպօլ
մէրքէզինտէն պէյաննամէլէր գա-
պուլ իթտիլէր: մէզքիւր պէյան-
նամէ՝ իսլահաթըն իճրա օլընմա-
մասը վէ էրմէնիլէրին թէհամիւլ
օլընմագ հալտէ պուլընտըզլարը
սէպէպլէ գօմիթէնին թէքրարէն
պու եօլաա ըսպաթը վիճուտ ի-
տիւպ, զայէթ տէհչէթլի թէշէպ-
պիւսաթտա պուլընաճաղընը պէ-
յան իթմիշ տիր:

Մէհաֆիլի սիյասիյէտէ զանն
օլընմագտա տըրքի էրմէնիլէր
պու հարէքէթլէրի իլէ վարար-
տիտէ օլաճագլար վէ գազանըլ
օլտըզլարը հիւսնի թէվէճուհը
զայպ իտէճէքլէր վէ իսլահաթըն
իճրասընա մանի օլաճագլար:

—Ինչպէ՞ս, իմզնդապետը կնոջս լլկեց,
ես երկուսին էլ սպանեցի, ինձ ու-
ղարկեցին տաժանակիր աշխատանքի,
ես փախայ, այնուհետեւ այդ սովորա-
կան դարձաւ, ինձ ուղարկում են,
ես էլ միշտ փախչում եմ, հայրենիքի
կարօտը մագնիսի պէս քարշում է
մարդուս, հենց որ երեւում է առա-
ջին կանաչը: հենց որ դալիս է գար-
նան աւետարբեր ճրվառ ծիծաղը սիրտս
սկսում է մղկտալ, ես փախչում եմ
դէպի Փոքր Ռուսիա, իմ սիրուն ու
չքնաղ հայրենիքը, ինձ ճանապարհի
կիսում բռնում են Ձարի սրտեսա ար-
գոսները, մի քանի խարաղան հաս-
ցընում եսուս, հայրենիքիս կարօտը
արիւնխեղղ անում եւ կրկին ինձ քը-
շում...

ՎԱՐԴՈ

(Շարունակելի)

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԵ

Սթանպոլսի Բոյոքթար պիլտիւր տիկինէ կէօրէ, Պէյօղլուտա իճ. րա օլընան թահարիւթտա 2. պօնպա պուլընմը, իքի էրմէնի տէրտէսթ օլընտըլար. պուլըլար Դիւլլակեան նամ գօմիթէյէ մէն. սուպ պուլընտըլարընը վէ Բուս վէ Ալման էլչիլէրէ գարըն պիւր ֆէսատ թէրթիպ իթմէքտէ օլ. տըգլարընը պիլտիւրմիլէր իմիշ...

Էլչիլէր հիւքիւմէթլէրինտէն թալիմաթ ալմամըշ օլտըգլարը իչիւն, տիւն թօրհանէ գօնֆէ. րանսը երկէ պաշգա կիւնէ թէէ. խիւր օլընտը: Լօրտ Սօլպէրի թէսալիանըն պօշտըլմասը իւ. զէրինէ իտտաա իթմէքտէ վէ Ալ. մանիա իսէ՝ մուգարբէր օլան ահանամէնին տէօրտիւննի պէն. տին գապուլ օլընմամսը հալին. տէ քէնտիսի իթթիֆագտան չը. գաճաղընը թէհտիտ եօլլու պիւ. տիւրմիշ տիւր:

Թաւնտա աթիտէքի օգոնմուշ տըր:

Օգոստոս 7 թարիխի թէպ. րիւտէն քէշիտէ օլընան պիւր թէ. լէկրաֆա կէօրէ Աճէմ-թիւրք սի. նօրընտաքի քիւրտլէր Սալմաստ թարաֆընա հիւճմ իթմիշ օլուպ իքի էրմէնի քէօյի մահվ իթմիշ. լէր. իքի երկ իսլամ վէ խիւթի. յան քէսիւմիշ տիւր: Աճէմ հիւ. քիւմէթի օլ ճիւլարա, եանի Ա. ճէմ սինօրը տալիլինտէ Ուրմիա կէօլի սահիլլէրինէ եէնի աքէր. լէր սէվգ իթմիշ տիւր:

Պու մէսէլէտէն տօլայը թիւրք վէ աճէմ հիւքիւմէթլէրի պէյնին. տէ մուսապէրաթ ճէրէյան իթ. մէքտէ տիւր:

Աթինաստան քէշիտէ օլընան օ. գոստ. 9 թարիխի պիւր թէլէկրաֆա կէօրէ, ինկիլթէրանըն իտտաաք իւլլէրինէ թաղմինաթը հարպիյէ էօտէնմէքտէն էվվէլ թիւսալիանըն թիւրքլէրտէն պօշտըլմասը մէ. սէլէսի տէվլէթլէրտէն գապուլ օ. լընաճաք տէյու զանն օլընմագտա տըր:

Կազէթալարըն պէյանը էֆքեար իթմէլէրինէ կէօրէ տէվլէթլէր պու. թէքլիֆի գապուլ իտէճէլէր վէ պու եօլ իլէ Եոնանիսթանըն մա. լիյէճէ օլան սըգընթընը միւնտէ. ֆի օլապիլէճէք վէ թաղմինաթը հարպիլէ էօտէմէք իչիւն իսթիգ. րազ իթմէյէ սուհուլէթի օլաճաք տըր:

Պոնտան ագտէմ իտամա մահ. քիւմ օլան վէ մէլանէթի իլէ մա. րուֆ պուլընան Մուրատ պէյ 8 կիւնտէն պէրու Սթանպոլա կէլ. միշ օլուպ, իսլահաթ գօմիսիօնը. նա ըէյիս թային օլընաճաք ըմըշ:

Տիկէր թարաֆտան գոնն օլընտը. զընա կէօրէ իսլահաթ մէսէլէսի եէնիտէն թէէլիւր իսիլէրէք, Մուրատ պէյ իսլահաթա նէգտի շահանէյէ միւշապիւր թային օլը. նաճաք ըմըշ:

Վառնատա իքի միւթէպէր զաթ պէյնինտէ հուսուլա կէլմիշ օլան պիւր միւնաղաւտան տօլայը մուճիպը թէէսիւֆ պիւր մէնգա. րէյէ մահալ վէրիլմէմէք իչիւն, տիկէր իքի զաթ թէվասուլթը ի. լէ մէգքիւր միւնաղաւտա խիւթամ վէրիլմէք մագաէտի իլէ, Ալքա. տալինամ Լնկերուլթիւնա իքի երկ ֆրանգ խանէ թալիսիս օլընտըլը վէ մէպլարը մէգքիւրին ընկերու. թիւն գանձապետինէ թէպիւմ ի. տիւրիկի մէսմուրմիլ օլմըշ տըր:

ՊՈՒ ԿԻՒՆՔԻ

ԹԵԼԵԿՐԱՖԻԱՐ

(Աժանս Պալգանիք)

Սթանպոլ, 11 Օգոստոս

Մէսմուլաթա կէօրէ, էրմէնի գօմիթէնին Սթանպոլ մէրքէրի ըէյիսլէրի տէրտէսթ օլընմըշար տըր: Պու ճանիլէրին պէշի տէ եագընէն իտամ օլընաճաղար:

Պիւթիւն էրմէնի քիլիսէլէրին. տէ Պատրիարք թարաֆընտան կոն. գալիար օգոնտը. պուլնուլա Պատ. րիարք սօն վուգուլաթա ճիւրաթ իտէնլէրի շէտիտէն իթհամ իթ. մէքտէ վէ էրմէնիլէրին լահաթ մուրմալարընը թէնպիհ ու թալ. սիյէ էյլէմէքտէ տիւր:

Գրօնլթատ, 11 Օգոստ.

Ֆրանսա ճիւլհուրիյէթ ըէյիսի Ս. Ֆէլիքս Ֆօռ սաաթ 11 1/2 տա պուրայա եէթիլտի վէ Բէթէրհօ. ֆա հարէքէթ իթմի:

Բէթրսպուրկ, 11 Օգոստ.

Չար վէ Ս. Ֆէլիքս Ֆօր վէ Բրէնս Ալէքսանտր վէ Ս. Մու. րալիէֆ վարօրը իմէրաթօրի ի. լէ Բէթէրհօֆա եէթիլտիլէր. 131 բարէ թօր հնտալտ օլընտը. Ս. Ֆօր իմէրաթօրիցա իլէ կէօրիւշ. տիւ վէ պիլաիսէրէ 34 զէվաթա մախսուս պիւր զիյաֆէթ քէշիտէ օլընտը:

Սթանպոլ, 10 օգոստ.

Շախաթա կէօրէ, օգոստոս 19. տա Սուլթանըն եէվմի ճիւլիւսը օլմագ մինասիպէթի իլէ Սուլթան պիւր իսլահաթ ճէտվէլի վէ պիւ. թիւն կէնճ թիւրքլէրէ աֆիլ ու. մումի վէ մաթպուլաթըն պիւր տէ. րէճէյէ գաւտար սէրպէստիյէթիւնի իլան իթմէք նիյէթիւնտէ իմիշ:

ԻՍԼԱՀԱԹ ՆԻՄՈՒՆԵՍԻ

Թիւրք հիւքիւմէթիւնին էրմէ. նիսթանտա իճրա իթմէքտէ օլ. տըլը իսլահաթըն նէ՝ կէօնա իս. լահաթ օլտըլընը օգոլանլարը. մըլա անլաթմագ իչիւն՝ Միւն. քիւնտա օգոնան աթիտէքի տը. րամը պուրայա տէլճ իտէրիլ:

Պիլթիւս վիլայէթի խալթ գա. զասը տալիլինտէ կողպ քէօյիւն. տէ միւթմէքին Պօլոս աղա՝ 40 եաշընտա մէօթէպէր, սահիպի սէրվէթ վէ 30 քիլիտէն միւրէ. քէպ պիւր խանէնին ըէիսի օլուպ, քէնտի սահիպի ախլազ օլմասը սէ. պէպլէ՝ թիւրք վէ էրմէնի հէր սընըֆ էհալիւնին թէվէճէրհիւնի գազանմըշ ըտը:

Տէֆալլէ հիւքիւմէթ Պօլոս աղայը մէմուրիյէթէ տալէթ իթ. միշ իտի իսէտէ, գապուլ իթմէ. միշ իտի. նիհայէթ հիւքիւմէթ անը միւտիւր թային իթմի, վէ իքի չէրքէպ անա մուսվին վէր. տի:

Մէգքիւր չէրքէպլէր սէֆիլքէօյ. լիւլէրէ էնվաի ֆէնալըզար իթ. մէկէ պաշլատըլար վէ Պօլոս աղա անլէրի մէնն իթմէք իսթէր իտի: Չէրքէպլէր պիւր կիւսվուրընէպարէ. թի ալթընտան գուրթուլմագ ի. չիւն անը էօլտիւրմէյէ գարար վէր. տիլէր: Պօլոս աղա 1897 Ապրիլ 30 տա Միւճք քէօյտէ ըէս Սիմօ. նըն էվլինտէ պիւր էֆէնտի իլէ մի. սարիֆ գալմըշ ըտը. օլ կիճէ իքի չէրքէպլէր ըվօլվէր էլլէրինտէնա. կէհան իչէրի կիւրպ, Պօլոս ա. զայը էօլտիւրիւլլէր: էրթէսի կիւ. նիւ խալթ գալմագամը վուգու. թը Պիլթիւս վալիսինէ պիլաիլիւր, վալի իքի մէմուր հօլլայուպ կէօնա թահգիլգաթ իթմիլիւր վէ Պօլոս աղանըն կիճէ եանընտա պուլու. նան թիւրք էֆէնտիլ հապս իտէր. լէր. պիւր գաշ կիւն սօնրա անը տալի մահպուստան չըգարըպ, էօլտիւրէնլէր էրմէնի ըմիշ տէ. մէքլէ իչէ նիհայէթ վէրիլլէր:

ԶԱՄԻՐԻ ԲԻԱՑԱՍԸ

Վառնա 13 Օգոստոս

ԵՍԿԻ ՄԱՀՍՈՒՆ

Պուլտայ

Վալիս, եօգ

Արապա, լիպրա 57-61, հէքթօլ. 14-15 ֆրանք

Ալքա

40-42 լիպրա, հէքթօլթ. 5,80-6

Նարօլէն 20,60 ֆռ. հիստպը իլէ

կիւնտէ եալընը 5-6 արապա պուլտայ վէ 5-6 արապա արբա էնտիկի սէպէպլէ օլան մուամէլէ էհէմիլլէթսիլ տիւր: Բիաջա՝ կէվէք:

Էէնի մահսուլտան կիւնտէ 50-60 արապա պուլտայ վէ 5-6 արապա արբա ինմէքտէ տիւր: Պուլտայ լիպրա՝ 47 տէն 56, ֆիյաթ՝ 8-12 ֆրանգ. արբա լիպրասը 38 տէն 41, ֆիյաթ 5,60-6:

Կիւնտէ 7-8 արապա ֆասուլեա կէլմէքտէ վէ մալա կէօրէ 100 օգգասը 17 տէն 23 ֆրանքա սա. թըլմագտա տըր:

ՄԵՃՏՈՒՏՔԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԳԻՇԵՐՈՅԻՎ

Վարժարանս որ արգէն հանրա. ծանօթ է կ. Պօլոս մէջ ունեցած իր արգիւնտար գործունէութեամբ ըր, ծանօթ գէպքերու պատճա. աւա գազրած ըլլալով, այս ան. գամ վառնայի մէջ պիտի վերա. հաստատուի յառաջիկայ սեպտ. 15 էն սկսեալ:

Վարժարանին ծրագիրը բարե. փոխուած է համապատասխան երկ. լին հանգամանքներուն, և մեծ գիւրուլթիւններ կընծայէ այն ա. շակերտաց որոնք փափագին յա. ռաջիկային պետական բարձրա. գոյն գալոցներու մէջ իրենց ու. սուլը շարունակել: Առ այս Պուլտարբէն լեզուն մեծ տեղ կը բռնէ յայտագրին մէջ հաւասար Մալիւնի և ֆրանսերէն լեզուաց, իսկ օսմ. լեզուի ուսումը պար. տաւորիչ է միմիայն թուրքիւնէ գալիք ուսանողներուն: Մեծ հոգ կը տարուի նաեւ նախնական և երկրորդական գիտութեանց, դըպ. րուլթեան և գեղարուեստի ճիւղե. րուն:

Կընդունուին միմիայն գիշերօ. թիկ աշակերտներ որոնք ընտա. նեկան խնամքի և հոգածութեան առարկայ են: Տարեկան թոշակն 30 օսմ. ոսկի. վեցամսեան կան. խիկ:

Տնօրէնութիւնը կը յուսայ թէ Պուլտարիոյ հայ հասարակութեան կողմանէ եւս պիտի գտնէ այն չըրմ համակրանքը զոր կը վայե. լէր թուրքիւլ մէջ, և այս աղըն. կալութեամբ կը խնդրէ այն պատ. ծնողքներէն որոնք կը փափագին իր խնամոյց յանձնել իրենց զաւա. կաց գաստիարակութիւնը որ հա. ճին մինչև յառաջիկայ սեպտ. 1 անձամբ կամ նամակով պէտք ե. զած գիւմուսն ընել, աւելի ման. րաման տեղեկութիւններ քաղիլու համար, առ հիմնագիր Տնօրէն

Գ. Պ. Մէլուռաճեան

Oulitza Botéva, 82. — IV Varna (Bulgarie).

Ա 2 7

Փորձառու և երկարատեւ ազգային վարժարանաց մէջ պաշտօնավարած, և Ուսումնական ինտրիդոյ կողմէն վկայեալ՝ զատիարակ և երաժիշտ ու. սուցիլ մը պատրաստ է պաշտօն ստանձ. նել չափաւոր ամսականով մը:

Փափաքողք պարտին գիմել ուղղակի իրեն հասցէին:

Ֆիլիպէ Գոռչուրու հան. հ. Պաղ. տասար Տարխանեան:

Ա 2 7

1897 Սեպտեմբեր 1էն սկսեալ վար. ձու պիտի տրուին Հաճի Բանաքօ Գա. րապաթաքի գինեստընը և պարտէզը, որ կը գտնուին Վառնայի երգ թաղը, թիւ 5, ծովեզերեայ պարտէզին գի. մացը:

Վարձել փափագողները մանրամաս. նութեանց համար կը հրաւիրուին գի. մել կալութեամբորթ, գրաւոր կամ բերանացի, առ

ՀԱՃԻ ԲԱՆԱՔՕ ԳԱՐԱՊԱԹԱՔ

Վառնա, 25 Յուլիս 1897 3-6